ԱՅԼԵՒ ԱՅԼՔ·

—

Զատկի կիւրակէի օրը Վեհափառ Հայրապետն ամենայն Հայոց Ս. Մակար Սրբազնագոյն կաթուղիկոս սուրբ պատարագ մատոյց և յետ պատարագին ի շնորհաւորութիւն Քրիստոսի սուրբ Յարութեան հաճեցաւ ընդունել միաբանութեանս, Ճեմարանի վարժապետաց և աշակերտաց, Վաղարշապատի առաջաւոր անձանց և դիւանատանց աստիճանաւորներին։

—

Մեծապատիւ Պարոն Նիկողայոս Տէր Յակոբեան գալով Մայր Աթոռս հաճեցաւ նուիրել ինպաստ Մայր Տաճարի վերանորոգութեան՝ 100 ռուբլի։ Ճեմարանի ընագիտական բաժնի համար՝ 300 ռուբլի։ և Ճեմարանի գրադարանի համար իւր գրատուները՝ աւելի քան 400 կտոր ընտիր գրքերով։ Նոյնպէս և Նոր-Նախիջևանի Ս. Թէոդորոս Եկեղեցւոյ երեսփոխան Պ. Սագիրեան նուիրել է ինպաստ Ճեմարանի՝ 300 ռուբլի։

Ստացած ի հաճոյս իւր ընդունելով յիշեալ բարեսէր անձանց նուէրը վարձատրէ նոցս ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ բիւրապատիկ բարեօք։

—

Շնորհակալութեամբ ստացանք «Երևակայական հիւանդ» կատակերգութիւն Մոլիէրի, թարգմանութիւն Պ. Երուանդայ Լալայեան. գինն է 40 կ. և «Մի կաթիլ արիւն» թարգ. Ս. Ամիրեանց, հրատարակութիւն Սմբատ-բէկ Լալայեանի. Գինն է 20. կոպէկ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ·

(Ի ՄԱՐՏ ԱՄՍՈՑ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ)

ՎԱՐՉԱԿԱՆՔ·

26 Մարտի. Սինօդը ըստ գրութեան Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքին շրջաբերական հրաման ուղարկեց բոլոր վիճակային ատեաններին, որոնել և գտնելուց յետոյ՝ ուղարկել Կ. Պոլսոյ Հայոց պատրիարքարանը Վանայ Դարման գիւղացի Աւօյեան Ալլահ-վերդի անուն անձին, որ տասն ամաց հետէ անհնամ թողնելով իւր կինն ու ընտանիքը՝ հեռացել է Ռուսաստան։

—

24 Մարտի. Սինօդը շրջաբերական հրաման ուղարկեց բոլոր վիճակային Ատեաններին այսուհետև տպագրելի բոլոր թերթերը, եկեղեցական չափաբերական Ատեանները, Երեսփոխանական տօմարները, և խոստովանութեան տետրակները իւրաքանչիւր տարի մինչև Մայիս ամիսը ուղարկել տը-